Առաջնորդը դիմաւորել էր Նորին Սրբութեան Աղատաֆա կայսրանում, իսկ Տփխիսի երիտասարդութիւնը կայսրանում և Մայր եկեղեցու դաւթում խուռն բազմութիւն է, ժողովուել Հոգևոր Տիրոջ օրհնութիւնն առնելու։ Առաջնորդարանում հանդստանալուց յետոյ Նորին Սրբութեան ներկայացել են պատուաւոր քաղաքացիներից շատերը և Տփխիսի պ. Նահանգապետը։ Յաջորդ կիրակի, օրը Նորին Վեհափառութիւնը այցելել է Կառավարչապետի օգնական Գենեռալ Փրէյլին, Սրբ. Էրզարիս Փլաւեանին և այլ բարձրաստիճան անձանց, և ընդունել է նոցա փոխադարձ այցելութիւնը։

Վեհափառ Հայրապետի յանձնարարութեամբ Տփխիսից հիւս. Կովկաս է գնացել Տ. Գարեգին վարդապետ Սաֆունեան, և Շուշի՝ Տ. Աշոտ վարդապետ։

Թերթիս խմբագիր Տ. Գարեգին վարդապետ Յովսէփեան տկարացած լինելով՝ անհրաժեշտ պէտք ունէր բժշկութեան և երկարատև կազդուրման. Վեհափառ Հայրապետը հրամայեց Շեմարանի Հ. Տեսչին ազատ կացուցանել նորան դասերից և ստանձնել առ ժամանակ Արարատի խմբագրութիւնը, և Տ. Գարեգին վարդապետ ուղևորուեցաւ մարտ 31-ին դէպի Տփխիս, մինչ ներկայ համարի նիւթերն ըստ մեծի մասին արդէն պատրաստ էին։

Նախօրօք եղած որոշման համաձայն Մեծ պահոց առաջին կիրակին Մայր տաճարում քարոզեց Բարձ. Յուսիկ վարդապետ, երկրորդ կիրակին Գեր. Գրիգոր եպիսկոպոս և երրորդ կիրակին Գեր. Մակար եպիսկոպոս. իսկ Դ. և Ե. կիրակիներին խօսեց Տ. Կարապետ վարդապետ։ Երջանկայիշատակ համար նշանակուած քարոզիչներից միայն Տ. Եղիա վարդապետ կարողացաւ այցելել Աշտարակի և Սուրմալուի վիճակները և Տ. Կարապետ վ. ու Տ. Գարեգին վ. Յովսէփեան այցելեցին շրջակայ մի քանի գիւղեր։

ՇԵՄԱՐԱՆ ՄԱՏՅՈՒ ԱԹՈՌՈՅ.

Շեմարանում այս տարի ընդունուած կարգի համաձայն, որով զանազան տարիքների ուսուցիչներ իրենց պարապմունքներին վերաբերեալ նիւթերով գրական երեկոյթներ պէտք է կազմեին մարտի 11-ին տեղի ունեցաւ վերջին երեկոյթը բնագիտական-բնապատմական տարիքներից։ Աշակերտների շարադրութեան և ընթերցման համար ընտրուած էին աւելի այնպիսի նիւթեր, որոնք բնական ոյժերի օգտակարութիւնն ու արդիւնաւէտ գործադրութիւնն էին բացատրում. իսկ երեկոյթի վերջում մոգական լապտերով ցոյց տրուեցան բազմաթիւ տեսարաններ հեռադիտակային և մանրադիտակային աշխարհներից, որոնք մեծ հետաքրքրութիւն յառաջ բերին և շատ բաւականութիւն պատճառեցին։—Մարտի 25-ին կատարուեցաւ ըստ սովորականին գրական հանդէս ս. Գրիգոր Լուսաւորչի Մուտն ի Վիրապն տօնի առթիւ։ Բ. լսարանի 3 ուսանողներ բանախօսութիւններ կարդացին նիւթ ունենալով՝ Հայոց դարձն ի քրիստոնէութիւն, պատմական ազգութիւնների քննադատական ուսումնասիրութեամբ. Բարեգործութիւնը Հայոց մէջ Դ. և Ե. դարերում և Բագրատունեաց ժամանակ։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԾՆՆԴԵԱՆ 80-ԱՄԵԱՅ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՏՕՆԸ Գ. ՇԵՄԱՐԱՆՈՒՄ.

Ամսոյս 4-ին լրացաւ ազգիս Վեհափառ Հայրապետի ծննդեան 80-ամեակը, մի փառաւոր հասակ, որ աւելի գին է, ստանում ամէն մի հայի աչքում այն հանգամանքի շնորհիւ, որ բազմաբովանդակ, սխրալի գործերով, անձնանուէր ծառայութեան և տաքինութեան վաստակներով հարուստ մի կեանք է եղել այդ։ Ո՞ր հային քաջածանօթ չէ ծերունազարդ Հայրապետի, իւր ազգի Հայրիկի կեանքն ու գործունէութիւնը. որքան խրատական է, այդ կեանքի ու գործունէութեան ուսումնասիրութիւնը. ինչ գեղեցիկ, կենդանի օրինակ է այն ճշմարիտ հայրենասիրութեան, եկեղեցականի ճշմարիտ խոնարհ-

հութեան, վեմ պարզութեան, իսկական ժողովրդասիրութեան, և ինչպէս զարդարում է այդ բոլոր առաքինութիւններն այն անկեղծ, ջերմեռանդ կրօնական ոգին, որով այնպէս զօրաւոր է հանդիսանում Հայրիկը։

Մայր Աթոռի հոգևոր ճեմարանը, որ առատապէս վայելում է Հայոց Հայրիկի առանձին խնամքն ու հովանաւորութիւնը, անշուշտ հրճուանօք պիտի ողջունէր իւր Հոգևոր Տիրոջ ու Հայրախնամ Հովանաւորի ծննդեան տարեդարձը, ոգևորուելով այն ըղգացմունքներովն ու սկզբունքներով, որ այդ ուխտաւնամեայ բազմաբեղուն կեանքի առաջնորդն են եղել։ Ուստի կապելով այդ ուրախառիթ օրուան հետ և Հայրիկի գրականական գործունէութեան յիսնամեակի տօնը, Գէորգեան ճեմարանի վարչութիւնը ապրիլ 4-ի երեկոյեան պատրաստեց մի գրական հանդէս ուսուցիչների և ուսանողների մասնակցութեամբ և ներկայութեամբ Մայր Աթոռի Միաբանութեան մի քանի անդամների։ Զ. դասատան մի աշակերտ, Վանեցի, համառօտ կենսագրական տեղեկութիւններ հաղորդելով՝ նկարագրեց Հայրիկի գործունէութիւնը Վարագում։ Բ. լսարանի ուսանողներից մէկը կարդաց մի աշխատութիւն հայկական տաղաչափութեան մասին, ցոյց տալով թէ ինչպէս է գործադրել Վէհափառ բանաստեղծը այդ չափն իւր երկու «Հրաւիրակների» մէջ և օրինակ բերեց վերջում այդ չափով գրած Հայոց Հայրիկի առաջին ոտանաւորը, որ նուիրել է չափը յօրինող Հ. Ա. Բագրատունուն։ Կարդացին ապա մի ընտիր հատուած «Վանդոյժ»-ից և մի քանի պատշաճ ոտանաւորներ։ Դոցանից յետոյ ամբիոն բարձրացաւ Ճեմարանի ուսուցիչ պ. Մ. Աբեղեանը և կարդաց մի մանրամասն ուսումնասիրութիւն Հայրիկի «Հրաւիրակների» մասին, որոնց բովանդակութիւնը, գաղափարները և գրականական արժէքը բացատրեց։ Հ. Կոմիտաս վ.-ի առաջնորդութեամբ երգեցիկ խումբը ներդաշնակ կերպով երգեց Հայրիկին նուիրուած երգեր։

Հանդէսը փակեց Ճեմարանի տեսուչ Հ. Կարապետ վարդապետը, մի քանի սրտառուչ խօսքերով յորդորելով Ճեմ. սաներին միշտ ձգտել օրինակ առնելու իրենց առաջ պատկերացրած փառաւոր կեանքից ու գործունէութիւնից, բարեմաղթեց երկար օրեր ծերունազարդ Հայրապետին և կատարումն իւր բարի ըղձերին։

Միահամուռ «կեցցէ»-ի թնդիւնը պատասխան եղաւ այդ բարեմաղթութեանց։

Նոյն օրը Ճեմարանի Հայր Տեսուչը հեռագրով շնորհաւորեց Վեհափառ Հայրիկի ծննդեան տօնը Ճեմարանի ուսուցչական խմբի և աշակերտների կողմից։

ՏԱՃԿԱՀԱՅՏ.

Խարբերդէն շատ տարօրինակ լուր մը կը հասնի մեզի. Պետրոս Պողոսեան անուն մխիթարեան մը հրաժարեցուցեր է իր պաշտօնէն՝ հետեւեալ ծանր (*) յանցանքները գործած ըլլալուն համար։ Ա.—Լուսաւորչականներու հետ մտերմօրէն կը տեսնուի եղեր։ Բ.—Երբեմն երբեմն Լուսաւորչականներու եկեղեցին կերթայ եղեր։ Գ.—Տօն ու կիրակի օրերը, առտու իրիկուն, իր խնամքին յանձնուած որբերը իրենց մայրենի եկեղեցին կը տանի եղեր աղօթելու։ Դ.—Օրին մէկը որբերէն երկուքը մեռեր են հիւանդութեան հետևանքով, ու Պ. Պետրոս Պողոսեան անոնց ծնողքին կամ ազգականին կամքը հարցնելէ առաջ արտօներ է որ թաղման կարգը քահանան կատարէ։ Բոլոր սոսնց հետևանքով Պ. Պողոսեան պաշտօնանկ կըլլայ առանց այլևայլի։

—Կիլիկիոյ կաթողիկոսական ընտրութիւնը. Խապայեան Տ. Սահակ եպիսկոպոսէ հեռագիր մը հասած է Պատրիարքարան, որ կը ծանուցանէ թէ իր պաշտօնին վերաբերեալ հրահանգները ստացած է։ Խապայեան Սրբազան նոյն հեռագրով կը ծանուցանէ թէ Սիսի Կաթող. Տեղապահ Տ. Կիրակոս եպիսկ. իրմէ առաջ ընտրութեան նախնական գործողութեանց ձեռնարկեր է և պատգամաւորները հրաւիրեր է մարտ 10 յառաջիկայ ուրբաթ օրը Ատանա գտնուիլ ընտրական գործողութեանց ձեռնարկուելու համար։ Խապայեան Սրբազան այս տեղեկութիւնները հաղորդելով, նոր հրահանգ խնդրած է Ս. Պատրիարք Հօրմէն։ Ս. Պատրիարք Հայրը անմիջապէս հեռագրեց թէ ընտրութեան հսկելու պաշտօնը իրն է (Խապայեան Սրբազանին), հետևապէս պէտք է ընտրա-

* Բազմավէպ, 1849 Հոկտեմբեր. եր. 309։